զակ քաղաքում։ Երբ Մասլամայ եկաւ Կապաղակ, հրամայեց իւր մօտ բերել Հարաշէին, պախարակեց նորան, պատառեց նորա շքանշանը եւ ուղարկեց նորան Պարտաւի բերդը։ Հիշամ թագեթով յանդիմանեց Մասլամայի այս վարմունքը եւ պատգամ ուղարկեց նորա մօտ, որ՝ հանելով Սայիդ ի. Ամր Հարաշէին բանտից, բերեց նորան Հիշամի մօտ։

Մասլամայ անցաւ Խազարայց գաւառները եւ մտաւ Վիրք, որ նա նուաճեց, կոտորելով բնակիչներին. այնուհետեւ եկաւ Շարուան, որի ժողովուրդը խաղաղութիւն կապեց նորա հետ, որպէս եւ Մաքթի բնակիչք։ Իւր հեծելազօր գունդը նա ուղարկեց Լակզիների երկիրը, որը հնազանդեցաւ նորան, եւ մի այլ գունդ՝ Տաբարսարան (Տաբարիստան), որ նմանապէս հաշտութիւն հաստատեց նորա հետ։ Անցնելով երկրներ, առանց որ եւ է թշնամական դիմադրութեան պատահելու, նա հասաւ Վարդան գաւառը, ուր նորան դիմաւորեց խազարայց թագաւոր խաքանը։ Մասլամային կ՝ուղեկցեին նուաճած երկրների իշխանք. նա դրեց Մրբուան ի. Մուհամմեդին առաջապահ գնդի վերայ. երկու բանակներ իրարու բախեցան եւ ճակատեցան շաբաթնակ մի քանի օր։

Հիշամ նշանակեց Մասլամայի տեղ Մրբուան ի. Մուհամմեդին, որ արշաւեց Սարիրի թագաւորի ամրոցը. այս գահը[1], որ ոսկուց էր շինուած, բատաւանդութեան Անուշիրուանն էր ուղարկել նորան, որի համար (երկիրը) կոչուեցաւ Սարէր։ Իշխանը խաղաղութիւն կապեց Մրբուանի հետ նորան 1500 սեւամազ սարուկ տալու պայմանով։ Այստեղից Մրբուան անցաւ Տումանշահի եւ ապա Ջիրիկրանի երկրները, որի իշխանք խաղաղութիւն կապեցին

---

[1] Սարէր արաբ. գահ կը նշանակէ։ Սարիր իշխանութիւնն կը գտանուէր սեւ Ծովի հարաւ-արեւելեան ափին։